



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

ԵՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 472

Վիճակիս Հոգեւոր Հովիւներուն
Եւ ծխական Խորհուրդներու Ատենապետներուն

Արտի խոր ցաւով կը տեղեկացնենք որ կարգ մը հրոսակներ Հինգշաբթի, Մարտ 27 առաւօտուն մուտք գործած են Լիվինկսթըն Նիւ ժըրզիի Ս. Աստուածածին Եկեղեցին եւ անոր կից սրահը՝ եւ արժէքաւոր իրեր զողնալէ ետք հրդեհի տուած են թէ Եկեղեցին եւ թէ սրահը:

Այս դժբախտ պատահարին հետեւանքով Ս. Աստուածածին Եկեղեցւոյ եւ սրահի ներքին մասերը հրոյ ծարակ դարձած են եւ փճացած են եկեղեցական ըսպասներ, գիրքեր, զգեստներ եւ արժէքաւոր իրեր:

Հրձիգներուն պատճառով բազմահազար տուարի այս աւերը Լիվինկսթընի մեր համայնքը պարտաւոր է միայն իր միջոցներով դարմանել, եւ ձեռնարկել Եկեղեցւոյ եւ սրահի վերանորոգման աշխատանքներուն, հատուցանելու համար եղած վնասները:

Այսու գիրով կոչ կ'ուղղենք մեր թուր համայնքներուն՝ որպէս զի իրենց նիւթական օժանդակութիւնը փութացնեն Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ եւ Առաջնորդի Փոխանորդ Հոգշ. Տ. Յուսիկ Ծ. Վրդ. Պաղտասեանի եւ ծխական Խորհուրդին՝ շուտով սկսելու համար վերանորոգման աշխատանքներուն:

Հաճեցէք ստորեւ գտնել Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւին հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Սիրոյ ողջունիւ
Թորգոս Արքեպիսկոպոս
ԹՈՐԳՈՍ ԱՐԷՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Ապրիլ 2, 1980

The Very Reverend Father Houssig Bagdasian
202 West Mount Pleasant Avenue
Livingston, New Jersey 07039
Tel: 201 - 992-8255